



2016 թվականի փետրվարին Քարինջ և Հաղպատ համայնքներում երեխաների պաշտպանության թեմաներով ֆոկլուս-խմբային քննարկումների ժամանակ մասնակիցները բարձրացրել էին դպրոցներում գործող խորհուրդների/կառավարման խորհուրդ, աշակերտական խորհուրդ, ծնողական խորհուրդ/ պասիվության և իրազեկվածության ցածր մակարդակի մասին: 2016 թվականի սեպտեմբերի 22-ին «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն, կարևորելով քննարկման մասնակիցների կողմից առաջ քաշված խնդիրը կազմակերպեց փորձի փոխանակում վերոհիշյալ դպրոցների և Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի միջև՝ բաց համակարգ և բաց կառավարում թեմաներով:

Քարինջ և Հաղպատ համայնքներից փորձի փոխանակմանը մասնակցում էին դպրոցի տնօրեններ, ԱԽ անդամներ, ԿԽ անդամներ և ակտիվ ծնողներ: Բաց համակարգ և բաց կառավարում թեմայով դասընթաց քննարկումը վարեց կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը: Փորձի փոխանակումը իրականացվեց ԿԿՀ Ալավերդու ՏԶԾ աջակցությամբ ՀՀԱԿ ՀԿ-ի կողմից իրականացվող քաղաքացիների ձայն և գործողություն/ԲԶԳ/ ծրագրի շրջանակներում:



